Funded by the European Union

EU4Environment
Green Economy in Eastern Partner Countries

Հայաստանում ռեսուրսների արդյունավետ ու ավելի մաքուր արտադրության զարգացում

ՌԱՄԱ մեթոդաբանություն

Ռեսուրսների արդյունավետ ու մաքուր արտադրությունը (ՌԱՄԱ) կանխարգելիչ բնապահպանական ռազմավարությունների համապարփակ և շարունակական կիրառումն է գործընթացների, ապրանքների ու ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և մարդկանց ու շրջակա միջավայրի վրա ռիսկերը նվազեցնելու համար: ՌԱՄԱ նպատակն է արտադրել ավելի քիչ ռեսուրսներով և միաժամանակ նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու բարձրացնել ընդհանուր արտադրողականությունը: Փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար ՌԱՄԱ մեթոդաբանությունը արդյունավետ գործիք է ծախսերը նվազեցնելու, ինչպես նաև ՓՄՁ-ների մրցակցային առավելությունները բարելավելու ու էկոլոգիապես մաքուր գործելակերպ կիրառելու համար: Ինչպես նաև, ՌԱՄԱ-ն համարվում է ՓՄՁ-ների շրջանում շրջանաձև տնտեսության սկզբունքների ներդրման և խթանման արդյունավետ գործիք:

«ԵՐՓԻՆ» ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ- ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության մասին

Գտնվելու վայր՝ Ելփին
Հիմնական ապրանքատեսակներ՝ 11 տեսակի պանիր
Աշխատակիցների քանակ՝ 7-11
Հիմնական շուկան՝ Հայաստան, Ռուսաստան, ԱՄՆ
Արտահանման քվոտա (%)՝ 35
Հիմնադրման տարեթիվ՝ 2017
Հավաստագրում՝ HACCP

«Երփին» կաթնամթերք արտադրող է Վայոց ձորի Ելփին համայնքից: Ընկերությունը հիմնադրվել է 2017 թվականին գյուղատնտեսական կոոպերացիայի նախագահ պարոն Արթուր Նազարյանի կողմից,: Բացի պանրի արտադրության մեջ մասնագիտացված լինելուց (11 տեսակ) ընկերությունը նաև մեծ ներուժ ունի ընդլայնվելու և այլ տեսականի արտադրելու, ինչպիսիք են յոգուրտները, սպիտակուցի փոշին և կենդանիների չոր սնունդը: Արտադրական գործընթացը հիմնված է տեղական հասանելի միջոցների վրա (կաթ և նուրբ խոտաբույսեր): Ընկերության հիմնական մարտահրավերներն են պանրի արտադրության ավելցուկային թափոնները (կեղտաջրերը և պինդ մնացորդները), որոնք թափվում են տեղումների ավազաններում առանց որևէ մաքրման, ինչպես նաև էներգաարդյունավետությունը (քանի որ արտադրությունը հիմնված է գազի, հեղուկացված նավթ և ցանցից էլեկտրականության օգտագործման վրա): Թափոնները նվազագույնի հասցնելու և էներգիայի բարձր ծախսերը նվազագույնի հասցնելու շարժառիթով ընկերությունը մասնակցել է ՌԱՄԱ ցուցադրական նախագծին «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» **EU4Environment** ծրագրի շրջանակում:

Առավելություններ

1	2	3	4
3 ՌԱՄԱ տարբերակ (կենտրոնացած էներգաարդյունավետության վրա)	Տարեկան 110000 մ ^{3} կեղտաջրերի կրճատում	Տարեկան 425 տոննա թափոնների կրճատում	Տարեկան 25 տոննա CO_2-ի կրճատում

Գործողությունն իրականացվել է

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | THE WORLD BANK IBRD • IDA | WORLD BANK GROUP

Նախագծի մոտեցումները

ՌԱՄԱ գնահատումն ուսումնասիրել է արտադրական տարածքը և բացահայտել ՌԱՄԱ տարբերակներ, որոնցից ընկերության կողմից առաջնահերթություն է տրվել հետևյալ երեքին: Այս միջոցառումները միջինից բարձր ծախսատարության առաջարկություններ են:

ՌԱՄԱ տարբերակ 1: Պանրի արտադրության մնացորդների մշակում և վերաօգտագործում: Այս միջոցառման ընթացքում պանրի արտադրության գործընթացի մնացորդները (շիճուկ և պանրի մնացորդներ) կվաճառվեն որպես կենդանիների համար չոր սնունդ և սպիտակուցի փոշի արտադրելուն՝ դրանք որպես թափոն պարզապես տեղումների ավազաններ թափելու փոխարեն: Սա կհանգեցնի շրջանառության ավելացման և միաժամանակ կնվազեցնի թափոնների առաջացումը:

ՌԱՄԱ տարբերակ 2: AAFBR-5 կեղտաջրերի մաքրման կայանի ձեռք բերում: Այս միջոցառումը կապահովի կեղտաջրերի բազմափուլ մաքրում: Ներկայումս կեղտաջրերն ուղղակիորեն թափվում են տեղումների ավազան, որտեղ դրանք միայն մեխանիկորեն մաքրվում են նստվածքի գործընթացի միջոցով, իսկ ավելի ուշ՝ արտանետվում շրջակա միջավայր: Վերամշակված ջուրը կօգտագործվի ընկերության այգու ոռոգման համար:

ՌԱՄԱ տարբերակ 3: Ֆոտովոլտային (ՖՎ) արևային վահանակների տեղադրում: Սա զգալիորեն կնվազեցնի ընկերության կախվածությունը գազի և էլեկտրաէներգիայի ցանցից (հիմնականում օգտագործվում է պաստերիզացման և սառեցման գործընթացներում) և հնարավորություն կտա դառնալ էներգետիկ առումով ինքնաբավ:

ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Հիմնական ՌԱՄԱ գործողություններ

ՏԱՐԲԵՐԱԿ 1	Պանրի արտադրության մնացորդների մշակում և վերաօգտագործում:
ՏԱՐԲԵՐԱԿ 2	AAFBR-5 կեղտաջրերի մաքրման կայանի ձեռք բերում:
ՏԱՐԲԵՐԱԿ 3	Ֆոտովոլտային (ՖՎ) արևային վահանակների տեղադրում:

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ներդրում (եվրո)	Խնայողություն (եվրո/տարի)	Հետգնման ժամկետ (տարի)
Տարբերակ 1:	35,000	26,500*	տվյալներ չկան
Տարբերակ 2:	22,000	10,000**	տվյալներ չկան
Տարբերակ 3:	20,000	17,000	տվյալներ չկան

*Գազի հաշիվը *23000* եվրո է, իսկ էլեկտրաէներգիան՝ *3500* եվրո

**Տեխնիկական ջուրը կազմում է *2000* եվրո, ոռոգման ջուրը՝ *3000* եվրո, իսկ այգիների ջուրը՝ *5000* եվրո:

Ռեսուրսների խնայողություն

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Նյութեր (տ/տարի)	Էլ.էներգիա (կվտժ/տարի)	Վառելիք (մ³/տարի)	Ջուր (մ³/տարի)
Տարբերակ 1:	15	95	100	/
Տարբերակ 2:	/	/	/	110,000
Տարբերակ 3:	425	/	/	/

Աղտոտվածության ընդհանուր նվազում

ՌԱՄԱ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ	Ընդհանուր CO_2 (տ/տարի)	Կեղտաջուր (մ³/տարի)	Թափոններ (տ /տարի)
Ընդհանուր:	25	110,000	425

"Մեր ընկերությունը բախվում էր ավելորդ քանակությամբ թափոնների և էներգիայի մեծ ծախսերի խնդիրների հետ, քանի որ կեղտաջրերն ուղղակիորեն թափվում էին տեղումների ավազաններ (որտեղ ապահովված էր միայն նստվածքի հիմնական մաքրում): ՌԱՄԱ ցուցադրական ծրագրի շնորհիվ մեր ընկերությունը սովորեց, թե ինչպես ռացիոնալ օգտագործել էներգետիկ ռեսուրսները և արդյունքում նվազեցնել թափոնները և բարձրացնել ռեսուրսների արդյունավետությունը: Քանի որ մենք նախատեսում ենք արտադրել տարբեր ենթամթերքներ պանրի արտադրության մնացորդներից և հետագայում նվազագույնի հասցնել թափոնները, ՌԱՄԱ նախագիծը մեզ ոգեշնչել է ՌԱՄԱ միջոցառումների հետագա իրականացման վերաբերյալ նոր գաղափարներով հանդես գալ",- ասաց Գյուղատնտեսական համագործակցության նախագահ՝ պարոն Արթուրը Նազարյանը:

ՌԱՄԱ-ի ներդրումը եղել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության մաս և իրականացվել է ՄԱԿԱԶԿ-ի կողմից: Այս համատեքստում **«Երփին»-ը** միացել է «ՌԱՄԱ» ցուցադրական նախագծին, որը մշտադիտարկվելու է «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» գործողության շրջանակներում: Հետագա այցելություններ են իրականացվել նաև՝ ստուգելու առաջարկվող ՌԱՄԱ տարբերակների իրականացումը: «ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագիրն օգնում է Արևելյան գործընկերության գործընկեր վեց երկրներին պահպանել իրենց բնական կապիտալն ու բարձրացնել մարդկանց բնապահպանական բարեկեցությունը՝ աջակցելով շրջակա միջավայրին առնչվող գործողություններին, ցուցադրելով և բացելով ավելի կանաչ աճի հնարավորությունները և ստեղծելով շրջակա միջավայրի ռիսկերն ու ազդեցությունները ավելի լավ կառավարելու մեխանիզմներ: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք՝ **www.eu4environment.org**

Այս հրատարակությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես ՄԱԿԱԶԿ-ի պատասխանատվությունն է և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

© – 2023 – ՄԱԿԱԶԿ: Բոլոր իրավունքները պաշտպանված են. Լիցենզավորված է Եվրամիությանը՝ համաձայն պայմանների:

ՄԱԿ-ի Արդյունաբերական Զարգացման Կազմակերպություն
տիկին Տատյանա Չերնյավսկայա
«ԵՄ-ն շրջակա միջավայրի համար» ծրագրի ղեկավար
Հեռ: +43 1 26 0 26 5520
Էլ. հասցե: t.chernyavskaya@unido.org

Կոնտակտներ:
Տարածաշրջանային բնապահպանական կենտրոն Կովկաս
Հասցե: Հայկական ազգային գրասենյակ
Այգեստան փ.**7,** շենք **N 2, 0010,** Երևան
Կայք: www.recp.am
Հեռ: +374 115 75 148